## ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**ԼԻԴԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ, «Մուրճ» ամսագիրը, *Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1982, 313 էջ։***

*Հայ պարբերական մամուլը, որը շուրջ 200 տարվա պատմություն ունի, եղել և մնում է մեր մշակույթի հարուստ գանձարաններից մեկը։ Պարբերական մամուլը անփոխարինելի աղբյուր է հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքի ու մշակույթի պատմության ուսումնասիրության համար։ Առանց դրա անհնարին կլիներ գրել հայ հասարակական-քաղաքական մտքի ամբողջական պատմությունը։*

*Ողջունելի է Լիդա Գևորգյանի «Մուրճ ամսագիրը» գրքի երևան գալը, որը նվիրված է XIX դ. վերջի և XX դ. սկզբի մեր նշանավոր պարբերականներից մեկի ուսումնասիրությանը։ Պատմաբանները, գրականագետները, տնտեսագետները տարբեր առիթներով անդրադարձել են «Մուրճ» ամսագրին, իրենց դրական և քննադատական խոսքն ասել, բայց ոչ որ այն հատուկ հետազոտության նյութ չէր դարձրել։ Լ. Գևորգյանի մենագրությունը առաջին ամբողջական ուսումնասիրությունն է «Մուրճի» մասին։*

*Իր ժամանակի նշանավոր տնտեսագետ, պատմաբան, հրապարակախոս Ավետիք Արասխանյանի «Մուրճ» ամսագրի հանդես գալը երևույթ էր հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության մեջ։ «Մուրճը» մեծապես նպաստել է թե՛ մեկի և թե՛ մյուսի զարգացմանը, դարձել առաջադիմական ուղղության արտահայտիչ։ Լ. Գևորգյանը փորձել է բացահայտել այդ երևույթի սոցիալ-տնտեսական և գաղափարական նախադրյալները, գնահատել ամսագրի դերն ու նշանակությունը հայ պարբերական մամուլի պատմության մեջ։ Ամենախստապահանջ քննադատն անգամ չի կարող չնշել, որ դա նրան հաջողվել է։*

*Աշխատությունը բաժանված է երկու մասի։ Առաջին մասում շարադրված է «Մուրճի» 1889—1900, իսկ երկրորդում՝ 1901—1907 թվականների պատմությունը։ Նման բաժանումն ինքնին արդեն ընդգծում է ամսագրի ապրած էվոլյուցիան, հեղինակի խոսքերով ասած «հին» և «նոր» շրջանների առկայության փաստը, որոնք ընդհանուր գծերի հետ մեկտեղ ունեցել են նաև էական տարբերություններ։*

*Առաջին մասը, որը կազմում է գրքի երկու երրորդից ավելին, նվիրված է Ա. Արասխանյանի խմբագրությամբ հրատարակված «Մուրճի» գործունեության լուսաբանությանը։ Այս մասը բաղկացած է յոթ գլխից։ Առաջին գլխում խոսվում է XIX դ. երկրորդ կեսի հայ հասարակական մտքի հիմնական ուղղություններին և «Մուրճի» ծննդի մասին։ Հեղինակն իրավացիորեն ամսագրի ծնունդը կապում է «Հյուսիսափայլի» և «Մշակի» ուղղության հետ, միաժամանակ նշում, որ «Արասխանյանի լիբերալիզմը զարդացավ ոչ թե դեպի աջ, այլ դեպի ձախ, այսինքն՝ շատ հարցերում ստացավ դեմոկրատական հնչեղություն։ Նրա «Մուրճը» 90-ական թվականներին դարձավ հայ դեմոկրատ մտավորականության հավաքատեղին ու ամբիոնը» (էջ 15)։ Առհասարակ նկատելի է հեղինակի առողջ միտումը՝ «Մուրճի» դեմոկրատական տարրերի բացահայտման ուղղությամբ։ Այս տեսակետից վերին աստիճանի արժեքավոր են նրա հայտնաբերած և գրքում զետեղած արխիվային վավերագրերը։*

*Հետաքրքրությամբ է ընթերցվում գրքի «Սոցիալ-տնտեսական հարցերը «Մուրճում» գլուխը։ «Մուրճը» մեր այն հանդեսներից էր, որն անհամեմատ լայն տեղ էր հատկացնում սոցիալ-տնտեսական հարցերի լուսաբանությանը։ Հանգամանորեն քննելով սոցիալ-տնտեսական կյանքին վերաբերող հոդվածները, հեղինակը վեր է հանում «Մուրճի» ու նրա խմբագրի դերը այդ հարցերի լուսաբանման գործում։ Նա առանձնապես նշել է առաջին հայ մարքսիստներից մեկի՝ Գ. Ղարաջյանի (Ս. Տ. Արկոմեդ), բանվորական հարցին նվիրված հոդվածները, գտնելով, որ նրա աշխատակցությունը «մի լուսավոր շերտ է մտցնում ամսագրի գործունեության մեջ» (էջ 70)։ Հեղինակը բարձր է գնահատում նաև հայ պրոլետարական գրականության հիմնադիր*

Հ. Հակոբյանի հոդվածները՝ նվիրված բանվորների ծանր դրությանը, նրանց ապահովագրության հարցերին։

«Մուրճի» և նրա խմբագրի ուշադրության կենտրոնում էր գտնվում նաև ագրարային-գյուղացիական խնդիրը, որը տվյալ ժամանակաշրջանի հայ իրականության մեջ սոցիալական կյանքի հարցերի հարցն էր։ Հեղինակն իրավացիորեն դա համարում է «Մուրճի» գլխավոր դրոշակը, գտնելով, որ «Արասխանյանի աշխարհայացքի դեմոկրատական դրսևորումները ցայտուն արտահայտություն գտան հատկապես հայ գյուղի պրոբլեմը ամսագրի էջերում արծարծելիս» (էջ 83)։ Նա ամենայն բարեխղճությամբ քննում, վերլուծում, գնահատում է տվյալ պրոբլեմին վերաբերող հոդվածները, գավառական թղթակցությունները, պատմագիտական ընդհանրացումներ կատարում «Մուրճի» ագրարային ծրագրի վերաբերյալ։

Լ. Գևորգյանի մենագրության երրորդ գլուխը վերնագրված է «Հայկական հարցը «Մուրճի» էջերում»։ Հայկական հարցը մեծ պատմություն ունի։ Մինչև օրս մենք չունենք այդ հարցի ամբողջական գիտական պատմությունը։ «Մուրճը» և նրա խմբագիրը մշտապես սեռոն ուշադրություն են նվիրել այդ հարցի լուսաբանությանը։ «Մուրճում» տպագրված Ա. Արասխանյանի «Տաճկա-հայկական խնդիրը», «Հայկական խնդրի նորագույն զարգացումը», «Նյութեր հայկական խնդրի նորագույն զարգացման պատմության համար» ծավալուն և բովանդակալից տեսություններն ըստ ամենայնի ուշադրության արժանի գործեր են։ Սակայն գրքի սահմանափակ ծավալը ըստ երևույթին հնարավորություն չի տվել հեղինակին հանգամանորեն ներկայացնելու այդ հարցը։ Ինչ վերաբերում է գրքում եղածին, ապա պետք է ասել, որ մի շարք կարևոր հարցեր այդտեղ արծարծվել են և իրենց հակիրճ ու համոզիչ լուսաբանությունը գտել։ Այսպես, օրինակ, հաջող են ներկայացված «Մուրճի» և նրա խմբագրի տեսակետը Հայկական հարցի նկատմամբ, սուլթանական կառավարության հայահալած քաղաքականությունը, արևմտաեվրոպական մեծ տերությունների նենգ ու խարդախ գործողությունները, «Մուրճի» ռուսական կողմնորոշումը և այլն։

Աշխատության չորրորդ գլուխը նվիրված է «Մուրճի» գրական քաղաքականությանը։ Արասխանյանի «Մուրճը», ինչպես հեղինակն է ասում, քայլում էր XIX դարավերջի գրական շարժման ավանդարդում, պայքարում գրականության դեմոկրատացման համար։ Նորարարության ջատագով խմբագիրը գրական շարժման վերելքը կապում էր երիտասարդ սերնդի հետ, «Մուրճը» համարում նոր սերնդի օրգան։ XX դ. մեր դասական գրողներից շատերը՝ Հ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Պ. Պռոշյան, Ա. Ծատուրյան, Վ. Փափազյան, Լ. Շանթ, Դ. Դեմիրճյան, Հ. Հակոբյան և ուրիշներ «Մուրճի» բովով անցած գրողներից են։ Այնուհետև մեկ առ մեկ անդրադառնում է «Մուրճին» աշխատակցած հայ գրողներին, ուշադրության առնելով «այն հասարակական բովանդակությունը, որ բերում էին ամսագրի հրապարակած գրական երկերը» (էջ 116)։ Հեղինակը վեր է հանում հանդեսի դերը ռեալիստական գրականության զարգացման գործում։ «Մուրճի հայտարար սկզբունքը գրական հարցերում ժողովրդասիրությունն է,— գրում է հեղինակը,— մուրճական գրողները... գրականությունը դիտում էին իբրև ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության հզոր միջոց» (էջ 120)։

Գլխի վերջում Լ. Գևորգյանը անդրադառնում է նաև թարգմանական գրականությանը և հայոնական գրական կապերին։ Արասխանյանը գտնում էր, որ «Մուրճը» պետք է իր ընթերցողներին ծանոթացնի համաշխարհային, առաջին հերթին ռուս գրականության գլուխգործոցների հետ։ Այդ միանգամայն ճիշտ գաղափարը նա հետևողականորեն կենսագործում էր։ «Հարկավոր է, որ հայ ընթերցողի աչքի առջև մի պատուհան բացվեր,— ասում էր Արասխանյանը,— որտեղից նա կարողանար յուր տեսողությունը տարածել նաև օտար, մեղնից շատ և շատ ավելի լուսավոր և առաջադեմ ազգերի մտքի ու ոգու արդյունքների վրա» (էջ 165)։ «Մուրճը» բացեց այդ ճանապարհը, եզրակացնում է հեղինակը, որտեղից կենսաբեր հոսանքներ եկան նպաստելու հայ ժողովրդի հետագա առաջընթացին և գրական կապերի ամրապնդմանը։

«Մուրճը» որպես լուսավորական օրգան» գլխում լուսավորության, կրթության ու դաստիարակության, գիտության, լեզվի, թատրոնի, երաժշտության վերաբերյալ նյութերի գնահատմամբ ցույց է տրված ամսագրի դերն ու նշանակությունը հայ մշակույթի զարգացման ասպարեզում։ Արասխանյանը մեծ նշանակություն էր տալիս երիտասարդ սերնդի կրթության ու դաստիարակության գործին, իր ամսագրի շուրջը համախմբում նշանավոր գրողների, գիտնականների, մանկավարժների, ինքը պարբերաբար հանդես էր գալիս ծանրակշիռ հոդվածներով և այդ

ամենը հայ մշակույթին զարկ տալու, լուսավորություն, գիտություն, կրթություն ու դաստիարակություն սերմանելու, կյանքը նոր, լուսավոր ուղիների վրա դնելու վեհ նպատակով։

Մենագրության վեցերորդ գլուխը վերնագրված է «Մուրճը» գրականության արխիվներում»։ Ծավալով փոքր, բայց բովանդակությամբ հարուստ այս գլխում հեղինակը բացահայտում է «Մուրճում» լույսը տեսած, գրականության կողմից արգելված հետաքրքիր ու արժեքավոր նյութերի գաղտնի ծալքերը։ Դրանք իշխողների կամայականություններն ու անարդարությունները մերկացնող, ժողովրդի շահերը պաշտպանող, ազգային-ազատագրական գաղափարներ պարունակող հոդվածներն էին, որոնք ցարական գրաքննիչները յոթ կողպեքի տակ էին պահում, ցմահ բանտարկության դատապարտում։ Եթե այդ արգելքները չլինեին, գրում է հեղինակը, ընթերցողները կկարդային Արասխանյանի, Ծատուրյանի, Թումանյանի, Իսահակյանի, Մանվելյանի, Փափազյանի ըմբոստ հոդվածները, բանաստեղծությունները, պատմվածքները։ Ցարական գրաքննիչները «Մուրճից» դուրս են գցել լավագույնը» (էջ 183)։ Իր մտքերը հիմնավորելու համար Լ. Գևորգյանը բերում է մի շարք փաստեր, նշում Արասխանյանի արգելված հոդվածները, Թումանյանի, Իսահակյանի, Ծատուրյանի բանաստեղծությունները և այլն։ «Մուրճի» արգելված նյութերը «տասնյակ հատորներ կկազմեին, լավագո՞ւյն հատորները» (էջ 195),— ասում է հեղինակը։

Գրքի առաջին մասն ավարտվում է «Ավետիք Արասխանյանի և նրա «Մուրճի» տեղն ու դերը հայ հասարակական մտքի պատմության մեջ» գլխով։ Սա յուրատեսակ հանրագումար է նախորդ գլուխների, «Մուրճի» և նրա խմբագրի 12 տարիների տքնաջան, անդուլ ու բեղմնավոր գործունեության։ «Արասխանյանը օրինակելի խմբագիր էր» (էջ 7), դեռևս 1914 թվականին ասել է մեծանուն գրականագետ Արսեն Տերտերյանը։ Բերելով նրա, ինչպես նաև Ալ. Շիրվանզադեի, Ստ. Շահումյանի, Դ. Դեմիրճյանի, Ա. Ադելյանի, Ատրպետի և ուրիշների կարծիքները, հեղինակն ըստ արժանվույն գնահատում է «Մուրճի» ու նրա խմբագրի դերը հայ մամուլի և հասարակական մտքի պատմության մեջ։ Նա խոսում է «Մշակի» և «Մուրճի» երկարատև հակամարտությունների, Արասխանյանի նյութական ծանր վիճակի, «Մուրճի» իրավունքը Կրասիլնիկյանին հարկադրված վաճառելու, մանկավարժական աշխատանքի անցնելու մասին և այլն։ Ամփոփելով իր մտքերը, վերջում հեղինակը գրում է. «Արասխանյանը եղավ XIX դարի երկրորդ կեսում աննախընթաց զարգացում ապրող հայ հրապարակախոսության նշանավոր դեմքերից մեկը... Հայ բուրժուական լուսավորության գաղափարախոս» (էջ 219)։ Խոսելով «Մուրճի» մասին, Լ. Գևորգյանը գրում է. «Սկիզբ առնելով և սնվելով հայկական լիբերալիզմի ակունքներից, իր ընթացքի միջոցին «Մուրճը» ներառավ իր մեջ հայ դեմոկրատական մտայնության վտակներ... «Մուրճը» մի քայլ առաջ մղեց հայ մամուլը, մի նոր աստիճանի բարձրացրեց հայ ամսագրային կուլտուրան, ապահովելով իր համար ուրույն մի տեղ հայ ժուռնալիստիկայի պատմության մեջ» (էջ 220)։ Ճշմարիտ գնահատականներ, որոնց հիմքում ընկած են մենագրության մեջ բերված փաստական հարուստ նյութերը, հեղինակի կատարած մեղվաջան պատմագիտական հետազոտությունները։

Թերևս հենց այստեղ կարելի լիներ վերջակետ դնել, բայց «Մուրճի» պատմությունն ամբողջական չէր լինի։ Հեղինակը ճիշտ է վարվել, շարադրելով նաև «Մուրճի» երկրորդ շրջանի՝ 1901—1907 թթ. պատմությունը։ Այս մասում խոսվում է «Մուրճի» նոր ծրագրի, նոր խմբագրի (Լևոն Սարդայան), դաշնակցության քննադատության, գրական, գիտական, լուսավորական գործունեության մասին։ «Մուրճի» այս շրջանը փաստորեն առաջին անգամ է հատուկ ուսումնասիրության նյութ դառնում։

Լ. Գևորգյանի մենագրությունը զերծ չէ առանձին թերություններից։ Մեր առաջին դիտողությունը վերաբերում է գրքի կառուցվածքին։ Առաջին մասի չորրորդ գլուխը վերնագրված է «Ամսագրի գրական քաղաքականությունը», իսկ հինգերորդը՝ «Մուրճը որպես լուսավորական օրգան»։ Այդ վերնագրերը գրեթե կրկնվում են նաև երկրորդ մասում։ Մեր կարծիքով, աշխատությունը շահած կլիներ, եթե գրականությանը, արվեստին, լեզվին, մշակույթի մյուս ճյուղերին վերաբերող նյութերը տրվեին մի գլխով և խուսափեին կրկնություններից։ Երկրորդ. Լ. Գևորգյանը գրում է. «Անցյալի մտավորականները չկարողացան տեսնել մեկ օրգանի մեջ երկու՝ Նազարյանի լիբերալ-լուսավորական և Նալբանդյանի մարտնչող դեմոկրատական ուղ-

ղությունների առկայությունը» (էջ 17)։ Հախուռն գնահատական է. անցյալի մեր ոչ բոլոր մտավորականներն են, որ տարբերություն չեն դրել Նազարյանի ու Նալբանդյանի միջև, անտեսել «Հյուսիսափայլի» լիբերալիզմն ու դեմոկրատիզմը։ Դեռևս անցյալ դարի 60-ական թվականներին Հ. Սվաճյանը և Մ. Մամուրյանը, 90-ական թվականներին Ա. Նաղարբեկյանը և ուրիշ մտավորականներ շատ որոշակի տեսել, հասկացել և գնահատել են Ստ. Նազարյանի լիբերալ-լուսավորական և Մ. Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական հայացքների տարբերությունը։ Այլ հարց է, որ սովետական շրջանում գրականագետներն ու պատմաբաններն իրենց գիտական հետազոտություններով ավելի հանգամանորեն բացահայտեցին այդ տարբերությունները։

Նշված թերությունները բնավ չեն նսեմացնում Լ. Գևորգյանի մենագրության արժանիքները։ Սեղանի վրա է գեղեցիկ ոճով ու հարուստ լեզվով շարադրված, ըստ ամենայնի արժեքավոր մի ուսումնասիրություն, որի կարիքը վաղուց էր զգացվում։

ՎԱՐԴԱՆ ՊԱՐՍԱՄՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր